որովհետեւ ռուս մատենագիր Շոպէն ենթադրում է թէ Հայերի, մանաւանդ Ջուղայեցիների դէպ ի Պարսկաստան գաղթելու պատճառն ոչ թէ Շահաբբասի բռնութիւնն էր, այլ այն հանգամանքը, որ հնդկական նոր ծովային ճանապարհի գիւտով առեւտուրը դադարել էր եւ ուրիշ ուղղութիւն ստացել։ Բայց ահա Շոպէնի գրուածը.

"Շատ նշաններից, հին աւանդութիւններից եւ տեղագրութիւնների հետազօտութիւնից պարզ երեւում է, որ հին ժամանակ Հայաստանում ծաղկած էր վաճառականութիւնը։ Վաղուց դէն ձգած քաղաքների փլատակները՝ այն է Աստապատի, Արտաշատի, Վաղարշապատի, Դուինի, Անու եւ այլոց՝ բերում են այս եզրակացութեան։ Բայց առանձնապէս հաստատում են այս միտքը Ջուղան եւ Ագուլիսը, որոնք չունենալով մշակելու հող՝ կարող էին պահպանել բնակիչներին միմիայն վաճառականութեամբ։

"Ջուղան 8000 դերդաստանով գտնւում էր քարաժայռերի մէջ, որոնք իրանց վայրենութեամբ սարսափեցնում են եւ որոնց վրայի ցցուած տները աւելի նման էին թռչունի բների, քան մարդկային կացարանների։ Բայց նրանց հարստութիւնն այնքան գրաւեց Շահաբբասին, որ 1605 թուականին տեղափոխեց նրանց դէպ ի Սպահան։ Ագուլիսը մշակելու հող չունենալով իւր 10.000 դերդաստան բնակիչներին պահպանում էր վաճառականութեամբ։

"Այդպիսի հետեւանքներ նոյն իսկ պատճառներից՝ նկատելի են ամենահին ժողովրդի մէջ Արեւելքում։ Աւազուտ, անբերրի եւ անջրդի անապատները, որոնք ձգւում են Պարսից ծոցից՝ Սեւ եւ Միջերկրական ծովերի արանքում, շատ դարեր